

եկեղեցւոյ սոյն գերեզմանատուն - բակը կը ծառայէ իբր խաղափայր Ազգ. մանկապարտէզի 300 է աւելի մանուկներու, յարմար դատուեցաւ որ այդ բարձր մասը նոր սալարկուծի ատեն իջնէ, առանց դամբարաններու տեղը խախտելու եւ այնպէս ալ եղաւ:

Երբ օր մը, Ազիզիյէի Ազգ. Գերեզմանատանց վրայ իրագործուի Քաղաքապետութեան ծրագիրը եւ նոր ուրայն ճամբաներու պարտադիր բացումով Շէյխ-Մազուտ փոխադրուին բոլոր մեռելոց աճիւնները, այժմէն պարտք կը դնենք Ազգ. Առաջնորդարանին վրայ, որ հոն հանգչող տասնեակ մը հողեւորականներու աճիւնները խնամով փոխադրուին Ս. Քառասնից բակը եւ անոնց տապանաքարերէն իւրաքանչիւրը զետեղուին իրենց նշխարներուն վրայ:

Արդէն, մօտաւոր օր մը, երբ Ազգ. նոր Գերեզմանատան մէջ հայադրոջ մատուռ մը բարձրանայ, անոր ներքնաշարկը պէտք է յատկացնել անկէ յետոյ վախճանող եկեղեցականներուն, եւ կամ անոնց համար սահմանել առանձին թաղամաս եւ ջանալ հոծ թաղի մը մէջ՝ ինչպէս է Սալիպէն, եւ մանուկներու աչքին առջեւ, քահանայից համար նոր դամբարան չբանալ, ինչպէս որ պարտադրած է արդէն Առողջապահական Տեսչութիւնը:

Ժէ.րդ դարու Հալէպի Հայ մշակոյթի մէջ մեծագոյն տեղը ու ծառայութիւնը ունեցող Ուրֆացի գրագիր Տէր Աստուածատուր նշանաւոր արուեստագէտ ու սրբակրօն քահանան, 1683ին վախ-

ճանած է Հալէպի մէջ, և զարմանալի է որ թաղուած է, մաքուր արձանագրի տակ, Ազիզիյէի Ազգ. Գերեզմանատան երրորդ բաժնին մէջ, նոյն տարին վախճանող Տէր Սարգիս գրագիր քահանային կից, մինչդեռ անոր արժանի տեղը ո՛չ թէ Ս. Քառասնից բակը, այլ ուղղակի մատրան մէջ էր, այնքան թանկագին են իր գործերը, որոնք սփռուած են այժմ Հալէպի, Էջմիածնայ, Երուսաղէմի, Վենետիկի, Վիեննայի և այլ բաղամթիւ ձեռագրաց Մատենադարաններուն մէջ: Անոր մահուան 250 ամեակին առթիւ, աճիւնները պիտի փոխադրուին Ս. Քառասնից Մայր Եկեղեցւոյ Աւագ խորանի բնիկին առջեւ, մեծ գրակալին տակ և վրայի տապանաքարը պիտի պահուի յարմար տեղ մը, եթէ ոչ ուղղակի աճիւններուն վրայ:

Ստորեւ կուտանք ամբողջական Արձանագիրը, թուականի կարգով այն բոլոր տապանաքարերուն, որոնք կը գրանուին Ս. Քառասնից հնագոյն մատրան, ինչպէս նաև 1616ին վերաշինուած տաճարին և արտաքին դաւթին մէջ: Հոս պարտք կ'ըզանք յիշատակելու որ Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ ունէ տապանաքարի չենք հանդիպած, հակառակ անոր որ առաջինին կից այդ տաճարն ալ անոր շօն հին է, կամ քիչ մը պակաս: Իսկ Հայոց երկու եկեղեցիներու միջև դանուող նախկին Մարօնիթ եկեղեցւոյ մէջ, այժմ տպարան, գտնուող տապանաքարերը, որոնք Մարօնիներու կը պատկանէին անշուշտ, փոխադրուած են Սալիպէի իրենց նոր եկեղեցւոյ բակը:

Հալէպի Ս. Քառասնից և Ս. Աստուածածին եկեղեցիները, Գասատունը ասոնց շրջապատի դամբարաններու արձանագիրները, Ազիզիյէի Ազգ. հին Գերեզմանատունը, Ս. Քառասնից եկեղեցւոյ հայերէն Ձեռագրաց համեստ Մատենադարանը, բոլորը իրարու առնթեր են և զիրար լրացնող և հետեւարար օգնած մեր ներկայ համեստ աշխատասիրութեան: Հատորիս առաջին երկու խորանագրերը լուսանկարուած են մեր գրչագրաց Մատենադարանի թիւ 15 արծաթապատ թղթեայ Աւետարանէն, որ իսկական հաւաքածու մը կը ներկայացնէ ՍՏԵՓԱՆՈՍ ԶՈՒՂԱՅԵՅԻԻ ընտիր մանրանկարներուն: Ձեռագիրս՝ որ հանրական նըւէրն է Ս. ՔԱՌԱՍՈՒՆԻՔ Եկեղեցւոյ բարեպաշտ Ժողովրդեան, գրուած է Հալէպի մէջ 1660-ական թուականներուն. ունի 251 թերթ և 25 × 19 × 5 սնդմ. մեծութիւն: Ժէ.րդ դարուն Հալէպի գրչական և նկարչական Գասատան ընտիր արտագրութիւններէն մէկը կարելի է համարել ներկայս: 12 դմայլիկ խորաններէն զատ ունի ձոխ գոյներով և գեղեցիկ գիծերով արժէքաւոր նկարներ, որոնք անպարտ փիճակի մէջ կը մնան մինչև այսօր: